

ԿՈՌԻԵԼ ԵՄ ՈՒԶՈՒՄ

Կոռուել եմ ուզում... Կոռուել, մաքառել.

Հանգիստ չէ սիրուա կրակոտ հոգիս.

Կոփի տենչանքով իմ սիրտն է վառուել,

Կոփւ եմ ուզում—դուքս զալ ասպարէզ:

Թող շարն ու կեղծիք—մարդկանց գերիշխան,

Ժայռի պէս խրոխտ դուքս զան իմ հանդէպ.

Եանթածին հոգիս կայծակի նման

Ժայռին կը զարկէ ուժգին, անվըէպ.

Եւ հասատացէք, կատաղի զարկով,

Չարիք ու կեղծիք ես կը փշրտեմ,

Ժայռը կընալեմ սրտիս կրակով,

Բարու յաղթանակ արծան կը կերտեմ...

* * *

Սարերի միզապատ, անժպիտ կատարին

Կանգնեցի թինկ տուած մամուապատ վէմ քարին.

Նայեցի դէպի ցած—ծովն ահեղ, ալեկոծ,

Գալարոն ալիքներ դիլաշարժ ինչպէս օծ,

Աշխուժով, եռանդով վազում են ամեն կողմ՝

Պայքարուա ու կուտա ժայռի դէմ անողորմ:

Ու հոգիս լցուեցաւ կոռուելու տենչանքով.

Նետի պէս սլացաւ քարծունքից դէպի ծով,

Սուզուեցաւ ալեաց մէջ՝ ամենի եւ անսանձ,

Ու կոռուեց, պայքարեց՝ անյողղողող, սիզապանձ...